«Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա» ՀԿ-ի EduArmenia
նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինպե՞ս կանխարգելել բուլինգը դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Միուդա Թադևոսյան

Հրազդանի թիվ 11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	6
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ	11
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	12
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ	18
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	21
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Բռնությունը անմոռանալի դաս է, որ ոչ մի երեխա չպետք է սովորի»

Հենրիետա Ֆոր

Աշակերտների՝ սեփական անձի, կյանքի նպատակների և աշխարհի մասին պատկերացումները հիմնավորապես ձևավորվում են այն կարևոր օղակում, որը կոչվում է դպրոց, որտեղ ուշադրության կենտրոնում պետք է լինի ոչ միայն կրթության որակը և նյութատեխնիկական բազայի առկայությունը, այլև անվանգ հոգեբանական միջավայրը, որտեղ լիարժեք կձևավորվի աշակերտի եսը:

Մենք ավելի հաճախ ենք ականատես լինում և դատապարտում ֆիզիկական բռնությունը, իսկ հոգեբանական բռնության բազմաթիվ դրսևորումներ ավելի քիչ նկատելի, չափելի և դատապարտելի են մեր կողմից:

Այն, ինչ կատարվում է երեխայի հետ, լինի լավ թե վատ, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա:

Թեմայի արդիականությունը

Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցյալ[1:]

Առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում տեղի ունեցած բուլինգը, և պատահական չէ, որ այսօր այն դարձել է համաշխարհային խնդիր: Երևույթը, որը բուլինգ են անվանում, Հայաստանում տարածված, սակայն չուսումնասիրված խնդիր է, չկան ստույգ վիճակագրական տվյալներ: Եվ ամենամեծ խնդիրներից մեկն էլ այն է, որ Հայաստանում այն աննկատելի, բնականոն երևույթ է համարվում: Դպրոցներում այն կարող է երկար ժամանակ անհետևանք մնալ և՛ աշակերտ-աշակերտ, և՛ ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում: Երևույթի աննկատելի ընթացքը լի է բացասական հետևանքներով, որոնք ներառում են և՛ կռվարարին, և՛ զոհին: Երեխաները, ովքեր ենթարկվում են բռնության, ավելի հավանական է, որ տառապեն դեպրեսիայից, անհանգստությունից, ունենան ուտելու խանգարումներ և ինքնասպանության մտքեր, ինչպես նաև այնպիսի առողջական խնդիրներ, ինչպիսիք են

[1] *U.S. Department of Health and Human Services 2014 Stu՝* *https://www.hhs.gov/foia/statutes-and-resources/officers-reports/2014-introduction/index.html*

գլխացավը, քնի խնդիրները, որովայնի ցավը, հոգնածությունը[2]: Նման երևույթից տուժում է երեխաների առաջադիմությունը, հաճախելիության մակարդակը նվազում է:

Հետազոտության նպատակը:

Սույն հետազոտությունը նպատակ է հետապնդում ներկայացնել Հրազդան քաղաքի հիմնական և ավագ դպրոցներում աշակերտների իրազեկվածությունը բուլինգի մասին: Ուսումնասիրել դրա դրսևորման առանձնահատկությունները դպրոցական միջավայրում, ինչպես նաև վեր հանել հնարավոր կանխարգելման միջոցները:

Հետազոտության խնդիրները:

- Պարզել աշակերտների իրազեկվածության մակարդակը բուլինգի մասին
- աշակերտների պատկերացումները դպրոցում մարդկային փոխհարաբերությունների վերաբերյալ,
- դպրոցականների վերաբերմունքը բուլինգի տարբեր դրսևորումների նկատմամբ,
- բուլինգի կանխարգելման միջոցները դպրոցական հաստատություններում:

[2] *«Բուլինգի Մասին» Ընտանեկան Բռնության Դեպքերի Տվյալների Առցանց Հարթակ URL:* https://rru.swv.am/%D5%A2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքս իրականացնելու և առաջ քաշված խնդիրներին պատասխանելու նպատակով կիրառել եմ

- **Ֆոկուս խմբային քննարկման մեթոդը**, որտեղ Հրազդան քաղաքի թիվ 11 միջնակարգ դպրոցի աշակերտների հետ խմբային քննարկման արդյունքում վեր է հանվել դպրոցական միջավայրում առկա բուլինգի առանձնահատկությունների ընդհանուր պատկերը: Իրականացվել է 4 ֆոկուս-խմբային քննարկում (2 քննարկում տղաների հետ և 2 քննարկում աղջիկների հետ), յուրաքանչյուր քննարկմանը մասնակցել է 4-6 աշակերտ: Քննարկումները անց են կացվել դեմ առ դեմ սկզբունքով:
- **Հարցման մեթոդը,** որին մասնակցել են թիվ 11 միջնակարգ դպրոցի 7-րդ և 9-րդ դասարանի աշակերտները:

ԳԻՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումը այլ անձի նկատմամբ կոչվում է բուլինգ (ահաբեկչություն): Այս տերմինը առաջին անգամ սկսել է գործածվել է 1530 թվականից. սկզբում նշանակում էր սիրելի, ապա տարբեր ձևափոխումներից հետո ստացել է ներկայիս անվանումը[3]:

Իմ գործունեության երկար տարիների ընթացքում եղել են պահեր, երբ ուղղակի կամ ունուղղակի բախվել եմ այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են՝



Գծապատկեր 1

[3] *«Բուլինգը դպրոցում», UNICEF, URL:*

https://elearning.kasa.am/pluginfile.php/9998/mod_resource/content/0/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf


ԲՈՒԼԻՆԳ
Ֆիզիկական
Վերբալ/բառային
Հարաբերական
Կիբերբուլինգ
Հրել, թքել, հարվածել, ապտակել, սեփականության վնասում կամ ոչնչացում, օրինակ հագուստի, պայուսակի վրա գրառումներ անելը
Գողություն
Այլ մարդկանց կռվի կամ վիճաբանության մեջ ներգրավելը
Պիտակավորել, ծաղրել, անհարկի բառեր և արտահայտություններ
Մեկուսացնել շրջապատից, հեռացնել , բացառել հասարակությունից
Սոցիալական մեդիա, գրավոր և ձայնային հաղորդագրություններ, առցանց, զրուցարաններ, ֆորումներ, Էլեկտրոնային նամակագրություն ,առցանց խաղեր

Գծապատկեր 2

Բուլինգն ըստ ձևերի կարելի է բաժանել 2 խմբի՝



Վնասել, ծեծել, գողանալ, ծաղրել, վիրավորել, սպառնալ, այն ավելի վառ դրսևորվում է կրտսեր դպրոցի, երբեմն՝ միջին դպրոցի երեխաների շրջանում:

Մեկուսացնել մարդկանց ընկերներից, շրջապատից, միջավայրից:

Գծապատկեր 3

Բուլինգի առկայության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել երեք կողմերի ներկայությունը[4] : Դրանք են՝

1. Կանոնները խախտող, ով պլանավորում է ճնշման իրականացումը:

2. Թիրախ,ում դեմ ուղղվում է ճնշումը:

3. Վկան, ով չի մասնակցում ճնշմանը, սակայն տեսնում և տեղեկանում է դրա մասին:

Հայաստանում բուլինգի դրսևորման հիմքում ընկած է կարծրատիպային մտածելակերպը, իրենցից տարբերվողների նկատմամբ անհանդուրժողականությունը, յուրահատուկ արտաքին տեսքը, այսպես կոչված «կանոններից» շեղումը, ընտանիքի սոցիալական ծանր պայմանները, իրավագիտակցության ցածր մակարդակը և այլն:

[4] *«Բուլինգը դպրոցում», UNICEF, URL: https://elearning.kasa.am/pluginfile.php/9998/mod_resource/content/0/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf*

Հայաստանյան դպրոցներում ու համայնքներում բռնության և ոտնձգության հիմնական պատճառները[5]

Գծապատկեր 4



[5] *«Բուլինգ. երեխաների բարեկեցության թաքնված սպառնալիքը», 2019, URL:* https://uic.am/9725

Թեև Հայաստանի Հանրապետությունում դեռևս բացակայում են բուլինգը և դրա հետևանքները կարգավորող օրենքները, այնուամենայնիվ, գործում են որոշ իրավական կարգավորումներ, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են խնդրին և նպաստում դրա լուծմանը: Դրանք են՝

- ՀՀ սահմանադրությունը, ընդունված 06.12.2015[6]
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ընդունված 29.05.1996[7]
- «Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», ընդունված 10.07.2009[8]
- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, ընդունված 20.11.1989, որը ՄԱԿ-ի կողմից վավերացվել է ՀՀ-ում՝ 22.07.19937[9]

ՀՀ-ում արդեն իսկ գործող այս օրենսդրական բազայի հիման վրա կարելի է ստեղծել իրավունքների իրացման պրակտիկ գործիքներ, ուղեցույցներ, որոնցով կառաջնորդվեն դպրոցները բուլինգի դեմ պայքարելու գործում:

[6] *Տե՛ս URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510*
[7] *Տե՛ս URL: https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115*
[8] *Տե՛ս URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908*
[9] *Տե՛ս URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503*

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հետազոտությունը սկիզբը դրվեց **հարցման մեթոդի** կիրառմամբ: Ընտրեցի թիվ 11 միջնակարգ դպրոցի 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարանի աշակերտներին: Կազմեցի հարցաշար և առաջարկեցի լրացնել այն: Այս մեթոդի կիրառումը ինձ հնարավորություն ընձեռեց ընտրել ճիշտ թիրախային խմբեր՝ հետագա **ֆոկուս խմբային քննարկման մեթոդի** կազմակերպման նպատակով:

Հարցման գործիքը ինքնուրույն լրացվող հարցաթերթիկն է: Այն կազմել եմ՝ հիմք ընդունելով "Save the Children" կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչության , Վորլդ Վիժն Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի փորձագետների թիմերի համատեղ ջանքերով մշակված «Երեխաների կարծիքով...» հարցաթերթիկը[10]:

Հարցաթերթիկի նմուշ



ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Սեռ

Աղջիկ	
Իգական	

2. Դասարան

3. Տարիք

11	
12	
13	
14	
15	

4. Դպրոցում երբեմն ձեզ ենթարկվել է՞ ձեր իրավունքները:
Այո ☐ Ոչ ☐ Մասամբ ☐

5. Տեղյա՞ն եք ձեր հարգանքները, կարծիքը ազատորեն արտահայտելու իրավունքի մասին:
Այո ☐ Ոչ ☐ Մասամբ ☐

6. Տեղյա՞ն եք ձեր կրթության առանցքում իրավունքի մասին:
Այո ☐ Ոչ ☐ Մասամբ ☐

7. Երբեմն ուրրոնի կամ անուրրոնի ներկու եղե՞լ եք ֆիզիկական բռնության, վիրավորանքի:
Այո ուրրոնիներին ☐ Այո անուրրոնի ☐ Ոչ ☐

8. Ինչպե՞ս եք արձագանքել կատարվածին:
Չեմ արձագանքել ☐ Բացասական եմ արձագանքել ☐ Արձագանքել եմ՝ միջամտելով ☐

9. Երբեմն դպրոցում զգացե՞լ եք անուրրոնի ճնշում ուսուցիչների կամ այլ աշակերտների կողմից, որը ձեզ վրա բացասական ազդեցություն է թողել:
Այո ☐ Ոչ ☐ Մասամբ ☐

10. Երբեմն ձեր ընտանիքում զգացե՞լ եք անուրրոնի ճնշում, որը ձեզ վրա բացասական ազդեցություն է թողել:
Այո ☐ Ոչ ☐ Մասամբ ☐

11. Պնդանկանությամբ որ ձեր խոսքը արժեքավոր դատողությունների կողմից:
Այո ☐ Ոչ ☐

Հետագայում հարցաթեթիկների արդյունքները վերլուծելիս կարողացա ընտրել 4- ից 6 երեխա 7-րդ և 9-րդ դասարաններից և կազմակերպել **Ֆոկուս խմբային քննարկումներ**, լսել երեխաների կարծիքները և դեպքերը, որոնց իրենք ականատես են եղել:

---

[10] *ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ «Երեխաների կարծիքով...», Save the Children & World Vision, https://resourcecentre.savethechildren.net/pdf/yv_brief_version_final_arm.pdf/*

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարցման մեթոդի կիրառման արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը

Գծապատկեր 5 *Տոկոսային բաշխում ըստ սեռի՝*



Գծապատկեր 6 *Տոկոսային բաշխում ըստ դասարանների՝*



Գծապատկեր 7. *Աշակերտների տոկոսային բաշխումը ըստ իրազեկվածության մակարդակի:*



Բուլինգի ազդեցությունը իրենց վրա ուղղակիորեն և անուղղակիորեն կրած աշակերտների տոկոսային հարաբերությունը:

Ուղղակի

Անուղղակի

Ի հավելումն աշակերտների շրջանում իրականացված հարցմանը՝ իրականացրել եմ նաև **Ֆոկուս խմբային 4 քննարկումներ**, որոնց մասնակցել է 4-6 աշակերտ: Քննարկումների նպատակն էր բացահայտել աշակերտների՝ բուլինգի վերաբերյալ ավելի խորը պատկերացումները:

Նախապես խնդրել և քննարկումներին ներգրավել էի դպրոցի հոգեբանին՝ համոզված լինելով, որ այս մասնագետի կարիքը կզգացվի քննարկումների ընթացքում «սառույցը կոտրելու» և հետագայում մասնագիտական օգնություն ցուցաբերելու հարցերում:

Արդյունքները և այն պատմությունները, որոնք բացահայտվեցին քննարկումների ընթացքում, ապշեցրին ինձ:

Ինչպես արդեն նշվեց կազմակերպել էի 4 քննարկում, թիրախային խմբերում ընգրկել էի հիմնականում այն տղաներին և աղջիկներին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվել են բուլինգին.
Մեկ քննարկում անցակացրել եմ՝ ընտրելով տղաների խումբ 7-րդ դասարանից, և մեկ քննարկում անցկացրել եմ՝ նույն դասարանից ընտրելով աղջիկների խումբ: Նույն սկզբունքով խմբեր եմ կազմել նաև 9-րդ դասարանից: Քննարկումները անցկացրել եմ առաձին-առանձին, որպեսզի երեխաները կարողանան ավելի ազատ արտահայտել իրենց մտքերը:

7-րդ դասարանի խմբերի խնդիրները:

Ես իմ կամքից անկախ, - պատմում է 7-րդ ա դասարանի Աշոտը[11]*, սովորում էի այնպիսի դասրանում, որտեղ հիմնականում սովորում էին ապահովված ընտանիքի երեխաներ: Ես լավ էի սովորում, և դա էր իմ միակ մեղքը: Սկսվեցին հալածանքները, ծաղր ու ծանակը: Մյուս տղաներին դուր չէր գալիս իմ՝ դասերին միշտ պատրաստ ներկայանալը, դասաժամին ցուցաբերած ակտիվությունը: Սկզբում ուշադրություն չէի դարձնում, լուրջ չէի վերաբերվում: Սակայն վիճակը ավելի բարդացավ. տղաները ոչ միայն ծաղրում էին, այլև ստիպում էին, որ ես թողնեմ իմ առաջադրանքները և գրեմ իրենցը: Երկար ժամանակ լուռ էի, ոչ մեկին ոչինչ չէի պատմում, չէի բողոքում՝ մտածելով, որ ինքս ստեղծված իրավիճակից ելք կգտնեմ, բացի այդ, տղա եմ, չէ՞. բողոքելը պատիվ չէր բերի: Վերջապես որոշեցի դեմ դուրս գալ նրանց, հրաժարվեցի կատարել հերթական ցուցումները, որի պատճառով խմբակային ծեծի ենթարկվեցի: Ելքը եղավ այն, որ ես խոսեցի ծնողներիս հետ և ասացի, որ եթե ինձ չտեղափոխեն ուրիշ դպրոց, ես կհրաժարվեմ ներկայանալ դասերին:*

Աշոտը ավելացրեց, որ մինչ այսօր իր ծնողներին չի պատմել, թե ինչու ինքը ցանկացավ փոխել դպրոցը:

Սա ֆիզիկական բուլինգի դեպքերից է, որի մասին ո՛չ ծնողը, ո՛չ ուսուցիչները չեն կարող իմանալ, եթե երեխան ինքը չցանկանա բարձրաձայնել:

7-րդ դասարանում էր սովորում Էմման[12]*. ներառված երեխա էր. ուներ տեսողական*

[11] *Աշակերտի անունը փոխված է:*
[12] *Աշակերտի անունը փոխված է:*

խնդիրներ, սովորում էր իր ուժերի ներածին չափով: Նա միշտ մեկուսացված էր ընկերներից, ինքնամփոփ, չէր խառնվում ոչ մի բանի, անտեսված էր , և այդ ամենը դասարանի մեկ այլ աղջկա՝ Նունեի պատճառով, ով կարողանում էր մյուսներին պահել իր ազդեցության տակ: Նրա ցանկությամբ ծաղրում էին Էմմային, շորերից քաշում, հրում, վիրավորում:

Օրերից մի օր ֆիզկուլտուրայի դասաժամին Նունեի ոտքը կոտրվեց: Որոշ ժամանակ անց նա վերադարձավ դպրոց հենակներով. հազիվ էր քայլում: Ճակատագրի հեգնանքով դասընկերները, որոնք ժամանակին ծաղրում էին Էմմային, սկսեցին ծաղրել Նունեին:

Պատմությունը ներկայացվեց Էմմայի կողմից, ով գրեթե ողջ ընթացքում ժպտում էր, նրա խոսքում վիրավորանք չէր նկատվում: Մյուս երեխաների հարցին, թե իր հիշողության մեջ արդյոք այդ դեպքը վատ հետք չի թողել, նա պատասխանեց՝ ոչ, և ավելացրեց, որ այդ դեպքերից որոշ ժամանակ անց ինքն ու Նունեն հասցրել էին մտերմանալ:

9-րդ դասարանի խմբերի խնդիրները:

9-րդ դասարանում քննարկումը, որին մասնակցում էին տղաները, ավելի թեժ էր: Այս անգամ քննարկման հիմնական թեման սոցիալական կայքերն էին, հատկապես առցանց խաղերը: Նրանք պատմում էին, որ տարիներ առաջ սոցցանցերում տարածված մի խաղ կար, որին առցանց կարողանում էին մասնակցել բոլորը: Տղաների պատմածից պարզվեց, որ այդ խաղը ընթանում էր ցուցումներով:

Արմենը[13] պատմեց, որ մի քանի տարի առաջ 10-րդ դասարանում սովորող իր բարեկամներից մեկը ինքնասպանություն է գործել, և ավելացրեց, որ հետագայում պարզվել է , որ բարեկամի տղան էլ այդ խաղի մոլի երկրպագուներից էր: Եվ հենց դա էր դարձել նրա ինքնասպանության պատճառը:

Սա կիբերբուլինգի վառ օրինակներից է, որը, ցավոք, կյանք արժեցավ:

Այնուամենայնիվ և՛ ինձ, և՛ հոգեբանին ուրախացրեց այն հանգամանքը ,որ այս դասարանի տղաները հստակ պատկերացում ունեին կիբերբուլինգից բխող վտանգների մասին, թեև տերմինին ծանոթ չէին:

9-րդ դասարանի աղջիկների խմբի հետ քննարկումը այլ ընթացք ստացավ, որն իրականում գովելի էր, քանի որ իրավիճակը ներկայացրեց ոչ թե բուլինգի զոհը, այլ հենց ինքը՝ բուլլերը:

[13] *Աշակերտի անունը փոխված է:*

Անահիտը[14] ցավով և զղջումով է հիշում տարիներ առաջ կատարած իր արարքը դասընկերուհու հանդեպ:

- *Դեպքը տեղի ունեցավ, երբ սովորում էի 6-րդ դասարանում: Առաջադիմությամբ փայլում էի, բոլորի ուշադրության կենտրոնում էի: Բայց ինձ բացարձակապես դուր չէր գալիս, երբ ուսուցիչս գովում էր մեկ այլ աշակերտի: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ պատմության իմ սիրելի ուսուցչուհին դասերից մեկի ժամանակ նախատեց ինձ ուշացման համար և դասի ժամանակ գովեց դասընկերուհուս՝ Սեդային: Նա էլ լավ սովորողներից էր: Դա ինձ վրդովեցրեց: Մի քանի օր անց դպրոց գնալիս նկատեցի, որ Սեդան իջավ աղբահավաք մեքենայից . պարզվեց՝ մեքենայի վարորդը հայրն է: Ես մտածեցի, որ ինձ հնարավորություն է տրվել նրան ծաղրելու , ծաղրուծանակի ենթարկելու:Եվ սկսվեցին Սեդայի համար անցանկալի օրերը : Նա փորձում էր աննկատ մնալ, դասերին այլևս ձեռք չէր բարձրացնում , հարցերին չէր պատասխանում, ու դա ինձ մեծ բավականություն էր պատճառում :*

  Եվ մի օր էլ , երբ դասղեկս խոսում էր դասարանի մաքրությունը կազմակերպելու մասին , ես, իմ կամքից անկախ, առիթը բաց չթողնելով ,բարձրաձայնեցի, որ այդ գործում մեզ կարող է օգնել Սեդայի հայրը. չէ՞ որ նա աղբատար մեքենայի վարորդ է: Զարախնդությամբ նայեցի Սեդային: Նա կարմրել էր, գլուխը կախել ,և արցունքները գլորվում էին աչքերից: Դասընկերներս չզսպեցին իրենց ծիծաղը: Նրանց ծիծաղից և Սեդայի արցունքներից ես կարծես սթափվեցի: Ներքուստ զգացի իմ սխալը, բայց չկարողացա ներողություն խնդրել: Եկա տուն, պատմեցի ամենը մորս: Մայրս նախատեց, նույնիսկ նեղացավ, բայց չվիրավորեց, այլ բացատրեց, որ չկա տգեղ և մերժելի աշխատանք, որ մարդիկ իրենք են գեղեցկացնում աշխատանքը: Ինձ ավելի շատ ցավ պատճառեց, երբ մայրս բերեց հորս օրինակը՝ մատնանշելով, որ ես նույնպես վարորդի դուստր եմ:

Սա վերբալ բուլինգի տիպիկ օրինակ էր: Գովելի է այն փաստը, որ ծնողն ինքը նպաստեց երեխային ճիշտ ուղու վրա դնելուն: Սա ապացույցն է այն բանի, որ բացի աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների, բուլինգի դեպքում կարևորվում է նաև ծնողի ճիշտ մոտեցումը և ազդեցությունը երեխայի վրա:

[14] *Աշակերտի անունը փոխված է:*

Քննարկումների ընթացքում բացահայտորեն նկատվում էր աշակերտների ակտիվությունը: Նրանք հետաքրքրությամբ էին լսում մյուսների պատմությունները և, անկախ իրենց կամքից, մտնում էին թեժ բանավեճի մեջ:

Վերլուծելով քննարկումների ընթացքը և արդյունքները, ինչպես նաև աշակերտների հետաքրքրվածությունը՝ ինձ համար պարզ դարձավ, որ երեխաները, այո՛, ունեն տեղեկատվության պակաս այս խնդրի վերաբերյալ, հստակ չեն պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում բուլինգը, բայց այդ երևույթի մասին ավելին իմանալու ցանկությունը մեծ էր:

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Քննարկումներից պարզ դարձավ, որ դպրոցում տեղեկատվության, քննարկումների, երևույթը բացահայտելու, ի ցույց դնելու և կանխարգելելու համար կազմակերպվող միջացառումների ակնհայտ պակաս կա: Հասկացա, որ դպրոցում կանխարգելման գործը հաջող կազմակերպելու համար պիտի հավասարաչափ ներգրավել և՛ աշակերտներին, և՛ ամբողջ ուսուցչական կոլեկտիվին, և՛ ծնողներին:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝

1. Առաջարկեցի ամիսը մեկ անգամ դպրոցի հոգեբանի, սոցմանկավարժի և այն ուսուցիչների հետ, ովքեր դասավանդում են տվյալ դասարանում, կազմակերպել քննարկումներ, բանավեճեր, որոնց նպատակն է բարձարցնել բուլինգի մասին իրազեկվածությունը դպրոցում:
2. Կազմակերպեցի բաց դաս Լիվինգստոն Լարնեդի «Հոր զոջումը» ստեղծագործության շուրջ: Ստեղծագործության հիմքում ընկած է հոր և որդու փոխհարաբերությունը: Հայրը անընդհատ վիրավորում, նկատողություն էր անում տղային, թելադրում և պահանջում էր տղայից անել իր ուզածի պես՝ առանց հաշվի առնելու իրենց տարիքային տարբերությունը: Դասը անցկացվեց դատավության տեսքով: Դասարանը բաժանեցի 2 խմբի՝ «մեղադրողներ» և «պաշտպաններ», որտեղ երեխաները կարողացան հեշտությամբ, հիմք ընդունելով ստեղծագործությունը, ազատ արտահայտել բուլինգի նմանատիպ դրսևորումների մասին իրենց պատկերացումներն ու տեսակետները:
3. Դասղեկի ժամերին աշխատում եմ ավելի շատ անդրադառնալ այդ խնդրին, քննարկել ու անպայման նշել այդ երևույթի՝ երեխայի վրա թողած վատ ազդեցության մասին՝ բերելով օրինակներ: Այս որոշմանը ես հանգեցի այն ժամանակ, երբ դասարան բերեցին արցախցի մի տղայի, որը դժվարանում էր արտահայտվել գրական հայերենով, խոսում էր միայն Արցախի բարբառով, և դա էր պատճառը, որ ինքն իրեն մեկուսացրել էր, ,առանձնացրել շրջապատից : Տղային օգնելու նպատակով դասղեկի ժամին առաջարկեցի հանձնարարված նյութը ներկայացնել իրենց բարբառով: Բոլորը խոսեցին, պատմեցին, ծիծաղեցին, մասնակցեց նաև Պավելը: Հասկացա, որ «սառույցը հալվեց». հաջորդ օրերին նա իրեն բավականին ազատ էր զգում:

4. Դասղեկի ժամերին աշխատեցի աշակերտներին ավելի շատ ծանոթացնել իրենց իրավունքներին, հանձնարարել կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները:
5. Տարբեր դասարաններում կազմակերպեցի խմբակային տեսահոլովակների կամ ֆիլմերի դիտում, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչվում էին այդ երևույթի հետ:

Օրինակ՝ ***«Ի՞նչ է բուլինգը, ինչպես կանխարգելել այն»***

«Գիքորը» *ֆիլմի դիտում և քննարկում*

6. Կազմակերպեցի առանձին հանդիպումներ ծնողների հետ, որտեղ խոսվեց բուլինգի կանխարգելման գործում ծնողների կարևոր դերի մասին: Նշվեց, որ ծնողը այդ պարագայում պետք է դառնա երեխայի նեցուկը, նրա ընկերը: Բոլոր իրավիճակներում երեխան պետք է հասկանա, որ ծնողն իր կողքին է, անհրաժեշտ դեպքում կկարողանա օգնել, օժանդակել իրեն: Յուրաքանչյուր ծնող պարտավոր է ստեղծել վստահության այնպիսի մթնոլորտ, որ երեխան կարողանա ազատ խոսել և ներկայացնել իրեն հուզող խնդիրները:
7. Առաջարկեցի դպրոցում բացել թեժ գիծ, որտեղ և՛ ծնողները, և՛ աշակերտները կկարողանան ահազանգել իրենց հուզող հարցերի մասին: Կամ դպրոցում տեղադրել արկղ, որը հնարավորություն կտա աշակերտներին իրենց հուզող հարցերի մասին բարձրաձայնել՝ անանուն գրառումներ տեղադրելով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս ուսումնասիրությունները թույլ տվեցին բացահայտել դպրոցներում առկա բուլինգի վերաբերյալ մի շարք առանձնահատկություններ և հանգել հետևյալ եզրակացության՝

- Աշակերտներն ակտիվորեն արձագանքեցին այն ամենին, ինչն արվեց իրենց շրջանում, ստիպեցին հասկանալ, որ իրենք բուլինգի մասին խոսելու, իրենց ձայնը լսելի դարձնելու պահանջ ունեն:
- Բացահայտվեց, որ և՛ բուլինգի պատճառները, և՛ դրսևորումները բազմաշերտ են.դրանք հիմնականում պայմանավորված են նաև կրթական համակարգում եղած թերություններով:
- Պարզվեց, որ և՛ աշակերտ-աշակերտ, և՛ աշակերտ-ուսուցիչ հարաբերություններում դեռ որոշակի բաց կա, որը պետք է լրացվի:
- Աշակերտների մեծ մասը դպրոցում իրեն զգում է չկարևորված. մտածում են, որ անընդհատ ոտնահարվում են իրենց իրավունքները:
- Դպրոցում շատ ուսուցիչների մոտ աշակերտների նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում՝ կապված աշակերտների ունակությունների, նրանց ֆինանսական ապահովվածության, իրենց մոտ հաճախող աշակերտի մասնավոր պարապմունքների հետ:
- Ակնհայտ դարձավ, որ դպրոցում կարգուկանոնի բացակայությունը պարարտ հող է ստեղծում բուլինգի զարգացման համար:
- Պարզվեց, որ բուլինգի նկատմամբ ավելի զգայուն են հատկապես այն երեխաները, ովքեր ամաչկոտ են, վախկոտ, անվստահ, մյուսների հետ հարաբերվելու հմտություններ չունեն, չունեն ընկերներ:
- Անհրաժեշտ է օգնության ձեռք մեկնել նրանց, որվքեր փորձում են միջամտել և կառուցողական լուծում տալ խնդրին:

Մի՛ լռեք, խոսե՛ք այս խնդրի մասին.

լռությամբ խրախուսում եք խնդրի տարածումը

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *U.S. Department of Health and Human Services 2014, https://www.hhs.gov/foia/statutes-and-resources/officers-reports/2014-introduction/index.html*
2. *«Բուլինգի Մասին» Ընտանեկան Բռնության Դեպքերի Տվյալների Առցանց Հարթակ URL: https://rru.swv.am/%D5%A2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/*
3. *«Բուլինգը դպրոցում», UNICEF, URL: https://elearning.kasa.am/pluginfile.php/9998/mod_resource/content/0/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%B6%D5%A3%D5%A8%20%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4.pdf*
4. *«Բուլինգ. երեխաների բարեկեցության թաքնված սպառնալիքը», 2019, URL:* https://uic.am/9725
5. *ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ «Երեխաների կարծիքով...», Save the Children & World Vision, https://resourcecentre.savethechildren.net/pdf/yv_brief_version_final_arm.pdf/*
6. ՀՀ սահմանադրություն, 06.12.2015 *URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510*
7. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, 29.05.1996 *URL: https://www.arlis.am/documentview.aspx?docID=69115*
8. «Հանրակրթության մասին ՀՀ օրենքը», 10.07.2009 *URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908*
9. ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա 22.07.1993, *URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503*